Բարև՛, իմ գրչակի՛ց ընկեր,

Ես Ամելիան եմ, 19 տարեկան: Առաջին անգամ է, որ նամակ եմ գրում հային: Ճիշտն ասած, մտածում էի՝ ինչ եմ գրելու, անգամ չգիտեմ՝ որտեղից սկսել: Երբ որևէ պատմվածք կամ գիրք եմ կարդում, սիրում եմ մտովի պատկերացնել դրա հերոսներին: Շատ կուզեի, որ դու էլ կարողանաս պատկերացնել այս նամակը գրող մարդուն, երբ այն ձեռքդ առնես: Ես գանգուր մազերով, շատախոս, ծիծաղկոտ, միջահասակ մի աղջնակ եմ: Ընտանիքս Զանգիլանից է, սակայն, ցավոք, ես այնտեղ չեմ ծնվել: Նրանք ասում են, որ ձեզ հետ շատ մոտ են եղել: Քեռիս ասում է, որ նա շատ հայ ընկերներ է ունեցել, միասին շատ ժամանակ են անցկացրել և հետաքրքիր հուշեր ունեն: Իսկ մայրս պատմում է, որ առևտուր անելու նպատակով հաճախ էին Ղափան գնում–գալիս: Թեև ես այնտեղ չեմ ծնվել–մեծացել, բայց ինձ միշտ հետաքրքիր է եղել, թե ինչպիսին է այդ տարածքը:

Գիտե՞ս, ամռանը իմ բաքվեցի ընկերները գնում են իրենց շրջաններ ու քաղաքներ, ափսոս, ես չեմ կարողանում գնալ, որովհետև օկուպացվել է: Գուցե դու բազմիցս եղել ես այն վայրերում, որոնք ես շատ կցանկանայի տեսնել: Ո՞վ գիտե, գուցե ինչ–որ մի ժամանակ կհանդիպենք ու սոսիների անտառներում կզբոսնենք: Կամ պատկերացրու՝ նստած ենք Արաքսի ափին ու խոսում ենք այն հույզերի մասին, որ ապրել ենք միմյանց նամակ գրելիս: Ճիշտ է, գուցե դա լինի շատ տարիներ անց: Այդ գործընթացը արագացնելու համար մենք խաղաղությունը ավելի շատ մարդկանց մեջ պետք է տարածենք:

Կարծում եմ, եթե այս նամակը կարդում ես, ուրեմն դու էլ ես ընտրում խաղաղությունը, այլ ոչ թե պատերազմը:

Ամենաբարի մաղթանքներով՝

Ամելիա